



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ Կանանց կարգավիճակի ՄԱԿ-ի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի արդյունքների քննարկումը



Երևան, 8-րդ ապրիլի, 2010 թ. - Այսօր ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովասուն» ծրագրի աջակցությամբ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ Կանանց կարգավիճակի ՄԱԿ-ի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի արդյունքների քննարկումը:

Այս նստաշրջանին, որը հայտնի է նաև որպես «Պեկին+15 ժողով», մասնակցում էին ՄԱԿ-ի անդամ երկրների, այդ թվում Հայաստանի կառավարության պատվիրակությունը,

քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչներ և գենդերային հիմնախնդիրների ոլորտում գործող ՄԱԿ-ի գործակալություններ: Նստաշրջանի նպատակն էր փորձի փոխանակումը և համագործակցությունը ՄԱԿ-ի անդամ պետությունների, քաղաքացիական հասարակության ու ՄԱԿ-ի գործակալությունների միջև՝ հաղթահարելու կանանց իրավունքների ոլորտում առկա խոչընդոտներն ու արդի մարտահրավերները:

Քննարկման մեկնարկին բացման խոսքով հանդես եկավ ՄԱԿ-ի մշտական համակարգող տկն. Դաֆինա Գերչևան, որն ասաց. «Պեկինյան գործողությունների պլատֆորմը կանանց հզորացման ծրագիրն է: Այն հիմնավորում է, որ կանայք կիսում են բոլոր այն մտահոգությունները, որոնք հնարավոր է հաղթահարել միայն տղամարդկանց հետ միասնաբար գործելով՝ հանուն ամբողջ աշխարհում գենդերային հավասարության հասնելու ընդհանուր նպատակի»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար տկն. Ջենմա Բաղդասարյանը և ՀՀ արտաքին գործերի նախարարության Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի վարիչ տկն. Կարինե Սուջյանը, ինչպես նաև «Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ տկն. Ջենմա Հասրաթյանը, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի փորձագետ պրոֆ. Վլադիմիր Օսիպովը և «Կինը և քաղաքականությունը» ամսաթերթի գլխավոր խմբագիր տկն. Թամարա Հովնաթանյանը ներկայացրեցին տեղեկատվություն ՀՀ կառավարության պատվիրակության և Հայաստանի քաղաքացիական հասարակության՝ 15 տարիների ընթացքում Պեկինյան գործողությունների ծրագրի իրականացման վերլուծման գործընթացին մասնակցության մասին:

Միջոցառմանը ներկա էին կանանց իրավունքների և գենդերային ոլորտում գործող պետական մարմինների, օտարերկյա և միջազգային կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՄԱԲՀ-ն՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, միջազգային զարգացման գործակալություն է, որը սատարում է յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի՝ առողջ կյանք վարելու և հավասար հնարավորություններ ունենալու իրավունքները: ՄԱԲՀ-ն աջակցում է երկրներին քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացում բնակչության տվյալների ներգրավման միջոցով, որն իր հերթին նվազեցնում է աղքատությունն ու ջատագովում, որ յուրաքանչյուր հղիություն լինի ցանկալի, յուրաքանչյուր ծնունդը՝ անվտանգ, յուրաքանչյուր երիտասարդ գեթ լինի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից, և յուրաքանչյուր աղջիկ և կին ստանա արժանապատիվ և հարգալից վերաբերմունք:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել Անուշ Ավանեսյանին՝ avanesyan@undp.org, հեռ. 566073+210, կամ Ջինա Սարգսյանին՝ sargizova@unfpa.org, հեռ. 541792: